

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՍԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր **04.03.2019**թ. հ.**01/57**Ս գրության՝ քաղաքացի Լիլիթ Միքայելյանի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանն ստանում է բազմաթիվ դիմումներ՝ կապված բնակարանային պայմանների բարելավման և բնակարան հատկացնելու խնդրի հետ: Ներկայումս, նշված խմբի քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացի Լիլիթ Միքայելյանի խնդրանքը բավարարելու նպատակով համապատասխան բնակելի ֆոնդ՝ ազատ բնակարաններ, հանրակացարանային սենյակներ կամ բնակության համար պիտանի տարածքներ Երևանի քաղաքապետարանի տնօրինության տակ առկա չեն, ինչի պարագայում, Երևանի քաղաքապետարանը քաղաքացուն բնակարան կամ բնակության համար պիտանի տարածք տրամադրելու հնարավորություն չունի: Տեղեկացվում է նաև, որ համայնքի սեփականություն հանդիսացող համայնքի ենթակայության և տրամադրման տակ գտնվող տարածքների տրամադրումը կարող է իրականացվել գույքի օգտագործման տրամադրման օտարման տարեկան ծրագրով սահմանված կարգի համաձայն: Նշված կարգով բնակարանային պայմանների բարելավման և ապահովման նպատակով բնակարանների ուղղակի տրամադրման գործառույթներ կամ լիազորություններ Երևանի քաղաքապետին վերապահված չէ:

Հայաստանի Հանրապետության կառավարության **2018** թվականի դեկտեմբերի **6**-ի հ.**1419**-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» կարգի համաձայն՝ բնակարանային ապահովության իրավունք ունեն.

1. 1-ին կամ **2**-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները, որոնք համապատասխանաբար կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու կամ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ Հայաստանի Հանրապետության

տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, որը, սակայն՝ 4-րդ աստիճանի վթարային է և քանդման ենթակա.

2. 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, որոնք կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, սակայն նախկին զինծառայողի և նշված կարգի 4-րդ կետում սահմանված՝ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասով բնակելի տարածության բնակելի մակերեսը կազմում է 5.5 քառակուսի մետրից պակաս:

Բնակարանային ապահովության իրավունքից չեն օգտվում այն անձինք, որոնք զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվանից առաջ՝ հինգ տարվա ընթացքում, օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունները կամ փոխել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունների օգտագործման նպատակային նշանակությունը կամ զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ բնակվում են օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չստացած բնակելի տարածությունում կամ օրենքով սահմանված կարգով ժառանգության բացումից հետո բնակելի տարածության նկատմամբ ունեն ժառանգական իրավունք, սակայն չեն հրաժարվել իրենց հասանելիք բնակելի տարածության նկատմամբ ժառանգության իրավունքից:

Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ սահմանված են դիմումատուների կողմից դիմումին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ մասնավորապես.

1) զինծառայողին հաշմանդամություն ունեցող ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքը.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինվորական հաշմանդամություն ունեցողի կամ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի կարգավիճակը հավաստող տեղեկանքը.

3) տեղեկանքներ բնակարանային պայմանների, ընտանիքի կազմի վերաբերյալ, որտեղ պետք է նշված լինեն բնակարանի սեփականատիրոջ, բնակարանի բնակելի մակերեսի, սենյակների թվի, այդ հասցեում հաշվառված անձանց և նրանց ազգակցական կապի մասին տվյալներ (եթե ընտանիքի չափահաս անդամները հաշվառված են տարբեր հասցեներում, ապա նմանօրինակ տեղեկանք պետք է ներկայացվի բոլորի հաշվառման վայրերից), բնակարանի և (կամ) բնակելի տան սեփականության վկայականի պատճենը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման և տեղեկատվական կենտրոնի կողմից տրված տեղեկատվությունը՝ շահառուների անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով բնակելի տարածություն ունենալու, ինչպես նաև զինձառայողի՝ զինվորական հաշմանդամություն ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվան նախորդող 5 տարվա ընթացքում և մինչև օրս ընկած ժամանակահատվածում սեփականության իրավունքով բնակելի տարածություն օտարելու վերաբերյալ.

5) շահառու չափահաս անձանց անձնագրերի պատճենները՝ հաշվառման էջերով, ամուսնության (ամուսնալուծության) և անչափահաս երեխաների ծննդյան վկայականների պատճենները, ուսումնառության և հաշմանդամություն ունենալու, խնամքի ներքո գտնվելու վերաբերյալ տեղեկանքները:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանը հայտնում է իր պատրաստակամությունը վերոնշյալ փաստաթղթերի առկայության պարագայում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի հ.1419-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում քննարկելու Ձեր կողմից բարձրացված հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ